

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-9-2-Ա

ք. Երևան

24.11.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի նոյեմբերի 24-ի նիստում քննարկեց 2025 թվականի մարտի 7-ին արտոնագրային հավատարմատար Արեգ Պետրոսյանի կողմից ներկայացված «Սիչուան Սանյան Նյու Մաթերիալս Քո.» ընկերության (No. 280, Yizhou Avenue North, High-Tech District, Chengdu, Sichuan 610000, China, CN) «Բազմամակարդակ փուլային անցումով ճկուն նյութ, որն ունի լայնակի կապով ցանցի կառուցվածք և դրա պատրաստման եղանակ» գյուտի (հայտ AM20220045) արտոնագիր տալն մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Գյուտի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Գրասենյակը որոշում է մերժել արտոնագիր տալը, քանի որ ներկայացված հավակնության սահմանմամբ հայտարկված գյուտերի խումբը (3 անկախ կետ) չի բավարարում «Արտոնագրերի մասին» օրենքի 16-րդ հոդվածով սահմանված արտոնագրաունակության պայմաններից՝ գյուտարարական մակարդակ պայմանին: Մասնավորապես՝ Տեխնիկայի մակարդակից հայտնի է ավելի վաղ առաջնության թվական ունեցող (24.12.2010) և ավելի վաղ բացահայտված (հրապարակված) հետևյալ տեղեկատվության աղբյուրը՝ CN 102070845 A, C08J3/24; C08L23/12; C08L23/16; C09K5/06; 25.05.2011:

Մասնավորապես, D1-ն (CN 102070845 A) բացահայտում է էներգիա կուտակող փուլային անցումով ջերմապլաստիկ կոմպոզիտային նյութ (տես նկարագրությունը, պարբերություններ [0009]-[0032]), որը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ ըստ զանգվածի տոկոսների՝ 5-30% պոլիպրոպիլեն (այսինքն՝ ջերմապլաստիկ խեժ), 10-40% էթիլեն պրոպիլենդիենի մոնոմեր (EPDM) (այսինքն՝ ջերմապլաստիկ էլաստոմեր), 20-75% պարաֆինային մոմ (այսինքն՝ փուլային անցումով ֆունկցիոնալ նյութ), 0,5-10,0% լայնակի կապող նյութ, 0,01-2,0% հակաօքսիդանտ, 0,01-10,0% տեխնոլոգիական հավելույթ և 0-10% լայնակի կապող հավելույթ: Համապատասխան բաղադրիչների վրա կատարվում է դինամիկ վուլկանացում՝ էներգիա կուտակող փուլային անցումով ջերմապլաստիկ կոմպոզիտային նյութ պատրաստելու համար: Լայնակի կապող նյութը գերադասելիորեն՝

Ֆենոլային խեժ կամ պերօքսիդ է, իսկ պերօքսիդը՝ դերկումիլ պերօքսիդ (DCP) և այլն: Լայնակի կապող նյութի ավելացումը կարող է առաջացնել EPDM-ի լայնակի կապում, որպեսզի ձևավորվի ռետինե փուլ, որն ունի եռաչափ ցանցային կառուցվածք: Համեմատության դեպքում, հավակնության սահմանման 1-ին կետը տարբերվում է D1-ից՝ բաց թողնելով հակաօքսիդանտը և տեխնոլոգիական հավելույթը: Այնուամենայնիվ, այս երկու նյութերն էլ պոլիմերային կոմպոզիտային նյութերի ոչ պարտադիր հավելումներ են, որոնք հայտնի են տեխնիկայի մակարդակում: D1-ի հիման վրա տեխնիկայի մակարդակին ծանոթ անձը նախընտրում է դրանք բաց թողնել և ակնկալել, որ դրանց գործառույթները կվերանան, որպեսզի ակնհայտ լինի սույն հայտի հավակնության սահմանման 1-ին կետով տեխնիկական լուծման ստանալը: Հետևաբար, հավակնության սահմանման 1-ին կետը չունի գյուտարարական մակարդակ:

Հավակնության սահմանման 2-րդ և 3-րդ կետերը կախյալ են 1-ին կետից և հետագայում սահմանում են նյութի կառուցվածքն ու հատկությունը: D1-ը բացահայտում է, որ EPDM-ը պարունակում է լայնակի կապով ցանց, և պոլիպրոպիլենն ինքնին ունի նաև փուլային անցման ջերմաստիճան, որը թույլ է տալիս կոմպոզիտային նյութին ունենալ բազմաստիճան փուլային անցման ջերմաստիճան: Հետևաբար, հավակնության սահմանման 2-րդ և 3-րդ կետերը նույնպես չունեն գյուտարարական մակարդակ:

Հավակնության սահմանման 4-10-րդ կետերը կախյալ են 1-3 կետերից և սահմանում են պատրաստման եղանակ և կոնկրետ հումք: Սակայն, սույն հայտում՝ հալույթում խառնման կատարումը և լայնակի կապվելուց հետո պոլիմերների ուռչումը, և D1-ում՝ խառնվելուց հետո մի քանի հումքերի լայնակի կապումը պատկանում են տեխնիկայի մակարդակից հայտնի լայնակի կապված փուլային անցումով պոլիմերային կոմպոզիտային նյութի պատրաստման եղանակին, և կարող է այլընտրանքային կերպով օգտագործվել տեխնիկայի մակարդակին ծանոթ անձի կողմից՝ առանց գյուտարարական ջանքերի կիրառման: D1-ը բացահայտում է, որ համապատասխան հումքը ներառում է պոլիպրոպիլեն, EPDM և DCP; փուլային անցումով մնացած նյութը, ջերմապլաստիկ էլաստոմերը, ջերմապլաստիկ խեժը կամ համատեղելիացուցիչը նույնպես տեխնիկայի մակարդակից հայտնի հումք են, և կարող են ընտրվել և օգտագործել տեխնիկայի մակարդակին ծանոթ անձի կողմից՝ առանց գյուտարարական ջանքերի կիրառման: Հետևաբար, հավակնության սահմանման 4-10 պկետերը նույնպես չունեն գյուտարարական մակարդակ:

Հավակնության սահմանման 11-16-րդ կետերը ներկայացնում են պատրաստման եղանակը, իսկ 17-18-րդ կետերը ներկայացնում են կայունությունը բարելավելու եղանակը: D1-ը բացահայտում է համապատասխան հումքի միջոցով էներգիա կուտակող փուլային անցումով կոմպոզիտային նյութի պատրաստման եղանակ կամ փուլային անցումով նյութի կայունությունը բարելավելու եղանակ (տես նկարագրությունը, պարբերություններ

[0009]-[0032]): Ավելին, հալույթում խառնման կատարմամբ և լայնակի կապվելուց հետո պոլիմերների ուռչմամբ պատրաստման կամ կայունության բարելավման եղանակը, ինչպես նաև մեխանիկական մշակման եղանակը, համաձայն սույն հայտի, երկուսն էլ պատկանում են տեխնիկայի մակարդակից հայտնի պատրաստման և մեխանիկական մշակման եղանակներին լայնակի կապված փուլային անցումով պոլիմերային կոմպոզիտային նյութի համար, և դրա հիման վրա գործընթացի պարամետրերի հետագա ճշգրտումն ու ընտրությունը նույնպես ավանդական պրակտիկա է տեխնիկայի համապատասխան մակարդակին ծանոթ անձանց համար: Հետևաբար, հավակնության սահմանման 11-18-րդ կետերը նույնպես չունեն գյուտարարական մակարդակ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ ներկայացված հավակնության սահմանմամբ հայտարկված գյուտերի խումբը (3 անկախ կետ) չի բավարարում «Արտոնագրերի մասին» օրենքի 16-րդ հոդվածով սահմանված արտոնագրաունակության պայմաններից՝ գյուտարարական մակարդակ պայմանին:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ փորձաքննության արդյունքում կայացված որոշումը իրավաչափ է:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 6 կողմ և 1 դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Արեգ Պետրոսյանի կողմից ներկայացված «Սիչուան Սանյան Նյու Մաթերիալս Քո.» ընկերության «Բազմամակարդակ փուլային անցումով ճկուն նյութ, որն ունի լայնակի կապով ցանցի կառուցվածք և դրա պատրաստման եղանակ» գյուտի (հայտ AM20220045) արտոնագիր տալն մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ